ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Կենսաբանական գիտ. XIII, № 12, 1960 Биологические науки

Ա. Ս. ԿՃՈՅԱՆ

# ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ XVII ԿՈՆԳՐԵՍԻՑ

*Վերջին տասը տարիների ընթացքում, 2—3 տարին մեկ անգամ, կանոնավոր կերպով տարբեր երկրներում հրավիրվում են բժշկագիտության պատմության միջազգային կոնգրեսներ։ Այդ կոնգրեսներում քննության են առնվում մարդկային անցյալ սերունդների թողած բժշկական կուլտուրային վերաբերող հարուստ ժառանգության հարցերը։*

*1960 թ. սեպտեմբերի 4—14-ը Աթենքում կայացած բժշկագիտության պատմաբանների XVII կոնգրեսը, որը նվիրված էր հույն հանճարեղ մտածող ու բազմահմուտ բժիշկ Հիպոկրատի (460—377 թթ. մեր թվարկ. առաջ) բժշկական գիտական, մանկավարժական գործունեությանը և ժողովուրդների բժշկական կուլտուրայի զարգացման վրա նրա թողած ազդեցության հարցին։ Ինչպես յուրաքանչյուր պատմական երևույթի, այնպես էլ բժշկագիտության պատմության ուսումնասիրության ընթացքում, տարբեր մեթոդոլոգիայի կիրառման հետևանքով, բնականաբար, այդ աշխատանքներում անխուսափելիորեն ցուցադրվում է սուր պայքար երկու իրար հակադիր՝ իմպերիալիստական լագերի — բուրժուական, մետաֆիզիկ. հետադեմ գաղափարախոսության և սոցիալիստական լագերի — դիալեկտիկ-մատերիալիստական, առաջադեմ գաղափարախոսության միջև։*

*Բժշկագիտության բուրժուական հետադեմ պատմաբանները միտումնավոր կերպով հիպոկրատագիտության մեջ կատարում են մի շարք կեղծումներ ու աղավաղումներ։*

*Ինչպես միշտ, ներկա կոնգրեսում նույնպես, իրենց տված բժշկագիտության պատմության համար մանր, երկրորդական նշանակություն ունեցող զեկուցումներում, հասկանալի պատճառներով, նրանք խոսք անգամ չասացին Հիպոկրատի ապրած ժամանակաշրջանում հույն ժողովրդի ձեռք բերած բարձր կուլտուրային նպաստող սոցիալ-տնտեսական-քաղաքական պայմանների և նախադրյալների մասին։ Գրականության, արվեստի, փիլիսոփայության և գիտության ասպարեզում անտիկ շրջանի հունական հասարակության ստեղծած բարձր կուլտուրան, որը իր զարգացման գագաթնակետին հասավ մեր թվականությունից առաջ V դարում և հանդիսացավ այժմյան բոլոր ժողովուրդների քաղաքակրթության հիմքը, նրանք վերագրում են նույն ժամանակաշրջանում Աթենքի ստրկատիրական դեմոկրատիայի գլուխ կանգնած՝ Պերիկլեսին, նրա, որպես պետական գործչի իմաստուն ղեկավարությանը։*

*Բուրժուական ռեակցիոն գիտնականները դժվարանում են պատմական ճշմարտությունը տալ այն մասին, որ անտիկ շրջանի հունական և հռոմեական կուլտուրայի բարձրարժեք գոհարները հետևանք են ստրուկների աշխատանքի անասելի շահագործման։ Այդ կապակցությամբ Ֆ. Էնգելսը գրում է. «Միայն ստրկությունն էր, որ ավելի լայն մասշտաբով հնարավոր դարձրեց աշխատանքի բաժանումը երկրագործության ու արդյունաբերության միջև և դրանով հնարավոր դարձրեց հին աշխարհի ծաղկումը, հունական կուլտուրան։ Առանց ստրկության հնարավոր չէր հունական պետությունը, հունական արվեստն ու գիտությունը. առանց ստրկության չէր լինի հռոմեական կայսրությունը»[1]։*

*Հիշյալ ժամանակաշրջանում էին ապրում ու գործում պատմաբաններ Հերոդոտը, Թուկիդիդը, դրամատուրգներ Էվրիպիդեսը, Սոֆոկլեսը, կատակերգու Արիստոֆանը, բանաստեղծ Պինդարոսը, քանդակագործներ Ֆիդիասը, Պոլիկլետը, փիլիսոփաներ Անաքսագորը, Դեմոկրիտը և ուրիշ շատերը։ Նրանք իրենց ստեղծագործություններով հաղթահարում էին բնության երևույթների նկատմամբ տակավին մարդկանց մեջ գոյություն ունեցող անհայտ ու խորհրդավոր կրոնական ուժերի վերաբերյալ պատկերացումները։ Ուսումնասի-*

[1] Ֆ. Էնգելս, *Անտի-Դյուրինգ*, 1940, էջ 246—247։

բելով բնության երևույթներն ու մարդկանց փոխհարաբերությունը։ Նույն հեղինակները ձգտում էին լայնացնել բնության նկատմամբ մարդու իշխանության սահմանները։ Այդ առթիվ Սոֆոկլեսը ասում է. — որ բնության մեջ շատ հրաշալի ուժեր կան, բայց մարդուց ուժեղը չկա։ Նույն մտածողի ստեղծած բարձր կուլտուրայի բոլոր բնագավառներում նկատվում է զարգացող հումանիզմը։ Նույն հեղինակներն աշխատում էին մարդկանց մեջ մշակել ազնիվ, նվիրական հատկություններ։

Ահա այս զարթոնքի ժամանակն էր, որ հանդես է գալիս նաև Հիպոկրատը, ծնունդ է առնում ու զարգանում նաև անտիկ աշխարհի հունական գիտական բժշկագիտությունը։

Ներկա կոնգրեսում մեր հուշատախտակների հետ առնչված ակտուալության բնույթ կրող երկրորդ առանձնահատկությունը դրսևորվեց բժշկագիտության մեջ Հիպոկրատի զարգացրած փիլիսոփայական ուղղությունը որոշելու հարցում։ Բուրժուական հետադեմ գիտնականներն իրենց զեկուցումներում միտումնավոր կերպով խուսափում էին ընդունել Հիպոկրատի աշխարհայացքը և նշել, որ նրա բոլոր աշխատություններում ցայտուն կերպով հանդես է գալիս մատերիալիստական գաղափարախոսության դոմինանտության փաստը։ Ավելին, Հիպոկրատին բժշկագիտության հայրը համարելով, նրանք մեկնաբանում են, որ նա բազմահմուտ բժիշկ է դարձել տաճարներում բժշկական գրավոր նյութերի ուսումնասիրության հիման վրա և աստվածների հատուկ ներշնչումով։

Նրանք անտեսում են Հիպոկրատի, ինչպես հմուտ բժշկի կազմավորման, այնպես էլ գիտական գործունեության մեջ խաղացած՝ ժողովուրդների էմպիրիկ բժշկականության բնագավառում կուտակված փորձի (որով նա խիստ հետաքրքրվում էր) գլխավոր դերի նշանակությունը։

Ամփոփելով Կոսի բժշկական դպրոցը, Հիպոկրատը տեղափոխվում է Աթենք, մի քանի տարի այնտեղ աշխատելուց հետո, նա շրջագայում է ամբողջ Հունաստանը, այնուհետև լինում է Միջերկրական ծովափնյա Փոքր Ասիայի շատ քաղաքներում։ Ամենուրեք նա ծանոթանում է բժշկական գիտելիքների վերաբերյալ գրավոր նյութերին և հատկապես մեծ ուշադրություն է հատկացնում ժողովրդական բժշկականության բնագավառում գանազան հիվանդությունների մասին գոյություն ունեցող տեսաբանության, ինչպես նաև բուժման նպատակով կիրառվող դեղամիջոցների ձևերի ու կերպերի արժեքի վրա։

Վերադառնալով Հունաստան, Հիպոկրատը սկսում է ամենալայն չափով զբաղվել պրակտիկ բժշկական ու մանկավարժական գործունեությամբ։ Հենվելով ժողովուրդների էմպիրիկ բժշկականության բնագավառի գրի առած հարուստ տվյալների և իր գործունեության ընթացքում կուտակած փորձի վրա, Հիպոկրատը կատարում է ընդհանրացումներ և առաջին անգամ գիտական սիստեմի է բերում բժշկականության բազմաթիվ հարցերը։

Այսպես, օրինակ, մեկնելով հիվանդությունների ծագման խնդրում տաքի և չորի ազդինների դերը, նա գիտակցաբար մշակում է հումորալ պաթոլոգիայի գաղափարը և, որ գլխավորն է, լայն չափով տալիս է բացում արտաքին միջավայրի բազմաթիվ և բազմազան ազդակների՝ մարդու օրգանիզմի վրա ազդող գործոնների ուսումնասիրության նշանակությունը։ Հիպոկրատը մեթոդաբար կատարում է հիվանդների այցելային բնությունը, տալիս է մի շարք հիվանդությունների տիպաբանական կլասիկ նկարագրությունը, մանրամասնորեն կանգ է առնում դրանց ախտորոշման, պրոգնոզի, բուժման ու խնամքի խնդիրների գիտական մշակման և հիմնավորման վրա։

Բժշկագիտության տարբեր մասնաճյուղերում նա ունի շատ խորը և իմաստալից մտքեր, բովանդակալից տեսություններ և գիտական կռահումներ, որոնք բժշկագիտության հետագա զարգացման գործում, որպես ուղեցույց աստղ, վճռական նշանակություն ունեցան։ Բժշկագիտության բազմաթիվ հարցերի վերաբերյալ Հիպոկրատի տված գիտական բնորոշումներից շատ շատերը իրենց նշանակությունը չեն կորցրել նաև մեր օրերի համար։

Հիպոկրատի մեծագույն և անգնահատելի ծառայությունը ոչ միայն այն է, որ նա հատուկ ուշադրություն է դարձրել արտաքին միջավայրի, մարդու կենցաղի ու սովորությունների ուսումնասիրության վրա, այլև այն, որ նա միաժամանակ պահանջում էր մանրամասնորեն հետազոտել մարդու ներքին խառնվածքը (ֆիզիոլոգիան) և նրա մոտ երևան եկող պաթոլոգիական բոլոր շեղումները, այսինքն՝ հիվանդությունները։ Այդ կապակցությամբ նա ասում է. «Բժշկական գիտության դատողությունների սկզբնակետը մարմնի բնությունն է»[1].

[1] *Гиппократ*. Соч., т. III, Москва, 1941, стр. 129.

Աշխարհի բոլոր բժիշկներից Հիպոկրատը առաջինն էր, որ հիվանդությունը գիտականորեն բնութագրում է որպես ընդհանուր օրգանիզմի տառապանք: Այդ մասին նա գրում է «... այդ մասերը (այսինքն մարմնի օրգան-սիստեմները — Ա. Կ.) գտնվելով իրար հետ փոխադարձ հարաբերության մեջ... հաղորդում են ամեն ինչի մասին բոլորին»[1]:

Այսպիսով, Հիպոկրատը հանճարեղ կերպով կռահել է միասնական ու անքակտելի օրգանիզմի առաջավոր գաղափարը:

Այնուհետև, «Սրբազան հիվանդության մասին» խորագիրը կրող իր աշխատության մեջ, որը վերաբերում է ընկնավորությանը (էպիլեպսիա), Հիպոկրատը այն ուղղակի համարում է ուղեղի հիվանդություն և այլն:

Բուրժուական գիտնականները չեն ցանկանում ընդունել պատմական իրական ճշմարտությունը այն մասին, որ մեզ զբաղեցնող ժամանակաշրջանի Հունաստանում զարգացող բնագիտությունը ընդհանրապես, և բժշկագիտությունը մասնավորապես, որի բարձրությունը կազմում էր Հիպոկրատը, առաջադիմում էր մատերիալիստական աշխարհայեցողության ուղղությամբ:

Եվ այդ պատահական չպետք է համարել, քանի որ տակավին միլեթական դպրոցի հույն փիլիսոփաներից շատերը տիեզերքի և մեզ շրջապատող առարկայական աշխարհի հիմքը մատերիան էին համարում: Այսպես, օրինակ, Թալեսը գտնում էր, որ սկզբնանյութը ջուրն է, Անաքսիմենը՝ օդը, Հերակլիտը՝ կրակը, իսկ Լևկիպը առաջ քաշեց ատոմիստական տեսությունը: Ավելին, Հերակլիտը (530—470 թթ. մեր թվ. առ.) գրում է, որ աշխարհը ո՛չ աստվածներն են ստեղծել, ո՛չ էլ մարդիկ: Այն եղել է, կա և կլինի միշտ օրինաչափորեն բռնկվող և օրինաչափորեն հանգչող: Նա ընդունում է առարկայական աշխարհի գոյության, փոփոխության և զարգացման հավերժականությունը: Վ. Ի. Լենինը Հերակլիտին հետևյալ կերպ է գնահատում. „Очень хорошее изложение начала диалектического материализма“[2]: Մեծ բնագետ, բժիշկ և փիլիսոփա Դեմոկրիտը, որը ատոմիստական տեսության հետագա զարգացնողը հանդիսացավ, Հիպոկրատի ժամանակակիցն էր ու նրա մոտ բարեկամը: Անտիկ աշխարհի այդ երկու խոշորագույն գիտնականների մտերմությունը և բարեկամությունը, անշուշտ, խարսխված էին բնության երևույթների ու մարդկային հասարակական փոխհարաբերությունների վերաբերյալ նրանց աշխարհհայացքի ընդհանրության վրա: «Մարդիկ իրենց աղոթքներում, — գրում է Դեմոկրիտը, — աստծուց են խնդրում առողջությունը և չգիտեն, որ իրենք ունեն այդ միջոցը իրենց տրամադրության տակ»:

Այս պատմական իրական ճշմարտությունը, այն պայմանների ու նախադրյալների համառոտ թվարկումը, որոնք Հիպոկրատի մատերիալիստական աշխարհհայացքի կազմավորման խնդրում վճռական նշանակություն ունեցան: Մեր գաղափարական հակառակորդները խուսափում են Հիպոկրատի գաղափարախոսության հարցը քննության առնել, որովհետև նրա թողած գրական ժառանգության ուսումնասիրությունը անհերքելիորեն բերում է այն համոզմանը, որ Հիպոկրատը հանճարեղ կերպով ընդգծում է բժշկագիտության զարգացման մատերիալիստական աշխարհըմբռնման ճիշտ ուղին:

Կոնգրեսում առանձնապես նշվեց Հիպոկրատի ցուցաբերած խստապահանջությունը բժշկի ունեցած տեսական ու կիրառական գիտելիքների հանդեպ: Հանրահայտ է, որ նա անազնվություն էր գտնում, երբ հիվանդների կոնսիլիումների ու կոնսուլտացիաների ժամանակ համոզվում էր, որ գործ ունի անուս, կիսագրագետ բժշկի հետ: Նրա հետ մեկտեղ նա մոռացության չէր մատնում հիվանդի նկատմամբ բժշկից պահանջվող մարդասիրության, ազնվության և նվիրվածության անհրաժեշտ հատկությունները:

Այս կապակցությամբ նա ասում է. «Բժշկությունը այնտեղ է, որտեղ կա սերը մարդու հանդեպ»: Դա ցայտուն կերպով երևում է նրա բոլոր աշխատություններում: Հիպոկրատը միևնույն խնամքով և ուշադրությամբ է քննել, բուժել, ինչպես ստրուկ և աշխատավոր, այնպես էլ արիստոկրատ և ունևոր մարդկանց ու կազմել նրանց հիվանդության պատմության նկարագրերը:

Հանրահայտ է նրա կազմած՝ բժշկի «Երդումը», որը յուրաքանչյուր նորավարտ

[1] *Гиппократ.* Соч., т. III, Москва, 1941, стр. 128—129.
[2] *В. И. Ленин.* Философские тетради. Москва, 1947, стр. 235.

բժիշկ հանդիսավոր պայմաններում պարտավոր էր ընդունել և ոչ միայն իրավունք ստանալ մտնելու բժշկության ամենապատասխանատու բնագավառը՝ աշխատելու:

Ինչպես ապացուցիչ էր և այդու, երբ ի նշան Հիպոկրատի նկատմամբ տածած երախտագիտության խորը հարգանքի, Կոնգրեսի պատգամավորության համար Գոս կղզում հանդիսավոր երդման պայմաններում (ինչպես այդ պահանջում էր հնագույն Հիպոկրատը) ցուցադրեցին Նորավարտ բժշկի «Երդում»ը ընդունելու խորհրդավոր արարողությունը:

Կոնգրեսի մասնակիցների հետ այդ չափազանց ուշադրով ունկնդրում էին նաև քաղաքի բազմաթիվ բնակիչները: Այն պահին, երբ բացօթյա բարձր հնչում էր Նորավարտ բժշկի երդման խոսքերն այն մասին, որ նա պարտավորվում է առանց խտրության, ազնվորեն, անձնվիրաբար և անշահախնդիր բժշկել իրեն դիմող բոլոր մարդկանց... Ներկա գտնվող 30 երկրների պատգամավոր բժիշկներից շատ-շատերը լռության մեջ ակամայից դառնություններ էին անում ներկայումս իրենց երկրում ծաղկող առողջապահական սիստեմի մասին:

Այդ ընթացքում իմ կողքին կանգնած հույն բժիշկներից մեկը, որի հետ ծանոթացել էի այդ օրերին, կռացավ ականջիս և ասաց. «Ի՞նչ է, որ ձեզ մոտ բուժսպասարկումը ձրի է»: Պատասխանս լսելուց հետո նա գլուխը կախ գցեց և երկար ժամանակ խորասուզված էր մտքերի մեջ:

Տրամաբանական է, որ այդ րոպեին իմ հույն և այլ ազգի կոլեգաների մտահոգության միակ դրդապատճառը կարող էին լինել իրենց երկրում բժշկին հատուկ վեհության և էթիկայի անկման ու նսեմացման հանգամանքները: Եվ հիրավի, ի՞նչ վեհության և բարոյական հեղինակության մասին կարող է խոսք լինել, երբ բուժելու համար բժիշկը հիվանդի հետ սակարկում է իր պահանջած գումարի վերաբերյալ կամ իր մասնավոր կլինիկայում, ինչպես առևտրականը շուկայում, տարբեր հիվանդությունների բուժելու համար սահմանել է կայուն սակագին:

Բժշկի «Երդում»ը ցուցադրելուց հետո, երբ վերադառնում էինք հյուրանոց, ճանապարհին պատգամավորներից ոմանք խիստ վրդովված վիճում էին իրար հետ... բայց նրանցից և ոչ մեկը չէր պաշտպանում կապիտալիստական երկրներում բժշկության բնագավառի մասնավոր պրակտիկայի արատավոր սիստեմը, հիվանդի բուժման համար աշխատավոր մարդու գրպանի համեմատությամբ գոյություն ունեցող անմատչելի գները:

Եվ հիրավի, օրինակ ամենազարգացած կապիտալիստական երկրում, ինչպիսին է Ամերիկան, հրապարակված պաշտոնական տվյալների համաձայն, մեկ ծննդաբերական օգնությունը արժե 95 դոլլար, ճողվածքի (գրիժայի) վիրաբուժական միջամտությունը՝ 131 դոլար, կույր աղիքի վիրահատումը՝ 107 դոլլար և այլն[1]:

Հիպոկրատը եղել է մեծ քաղաքացի և հումանիստ: Մոտիկից դիտելով արիստոկրատիայի շռայլ ու ցոփ կյանքը և ստրուկների չարքաշ առօրյան, քննության առնելով պատերազմների ծագման և դրանց հետևանքները, նա հանգում է քաղաքական-սոցիոլոգիական շատ կարևոր հետևությունների: Հանճարեղ մտածողը, գիտական բժշկականության հանճարն ու մեծ հումանիստը ասել է, որ պատերազմներից շահում ու մեծ ավարներ են ստանում թագավորները և արիստոկրատները: Իսկ ստրուկները, թողնելով իրենց ընտանիքը, բարեկամներին ու հարազատներին, գնալով պատերազմ՝ շահում են միայն մահը կամ հաշմանդամ դարձած վերադառնում են տուն:

Միջազգային ներկա քաղաքական լարված մթնոլորտի պայմաններում ժողովուրդների համագործակցության, զինաթափության և խաղաղության համար մղվող պայքարի տեսակետից, առանձին նշանակություն են ստանում Հիպոկրատի հումանիստական վեհ գաղափարները:

Սովետական պատգամավորներից ակադ. Ն. Վ. Տերնովսկին կոնգրեսում զեկուցումով հանդես եկավ «Հիպոկրատի ազդեցությունը Ավիցեննայի վրա» թեմայի [illegible], որտեղ նա բացահայտեց բժշկագիտության բնագավառում այդ երկու տիտանների գործադրած մատերիալիստական աշխարհայացքի և ուղղության ընդհանրությունը: Վերջում նա սովետական պատգամավորության անունից Աթենքի համալսարանին նվիրաբերեց Ավիցեն-

[1] Г. А. Баткис, Организация здравоохранения, Москва, 1948, стр. 32.

նայի (980—1037 թթ.) «Բժշկագիտության կանոնները» մեծածավալ աշխատության վերջերս լույս տեսած ռուսերեն լիակատար թարգմանությունը։

Պրոֆ. Ա. Ն. Ռուբակինը «Բժշկագիտության պատմության լեզվաբանական ուսումնասիրության մեթոդը» զեկուցումով պարզորոշ ցույց տվեց, որ բժշկական գրականության մեջ թափանցող տերմինների օգնությամբ նույնպես հնարավոր է որոշել այս կամ այն գիտության զարգացման ժամանակը և կրած ազդեցությունը։

Պրոֆ. Ս. Մ. Բաղդասարյանը «Հին հունական կուլտուրայի նշանակությունը բժշկագիտության զարգացման գործում» իր զեկուցման մեջ նշելով այդ կուլտուրայի համաշխարհային նշանակությունը, ընդգծեց նախաքրիստոնեական Բյուզանդիայում և Հայաստանում հանդեպ հին հունական կուլտուրան ունեցած ամբողջական գիտնականների մեծ հետաքրքրությունը։ Նա մատնանշեց, որ մեզ մոտ հունական մի շարք փիլիսոփաների, պատմաբանների և գիտնականների դասական գործերի հին մեկնությունները, որոնց հրատարակված են նաև անմահ Հիպոկրատի երկերի հատորները։

Սույն տողերի հեղինակը զեկուցեց «Բժիշկ Գրիգորիսը որպես Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի առաջադեմ բժշկագիտության ականավոր ներկայացուցիչ» (XIII դ.) թեմայի մասին, բացահայտելով, որ միջնադարյան Հայաստանում մեր ինքնատիպ բժշկագիտությունը զարգացել է անտիկ աշխարհի, հելլենիստական, բյուզանդական և, այսպես կոչված, արաբական բժշկական կուլտուրայի լավագույն նվաճումների ու տրադիցիաների պահպանման, դրանց փոխազդեցության ոլորտում և որ, հակառակ նույն ժամանակաշրջանում եվրոպական երկրներում գոյություն ունեցող սխոլաստիկ-դոգմատիկ բժշկականության, Հայաստանում բնական գիտությունները, ինչպես և բժշկագիտությունը առաջադիմում էին հիմնականում հիվանդի անկողնի մոտ, փորձի ու գիտականության տվյալների ընդհանրացման հիման վրա, որի կարկառուն ներկայացուցիչն է եղել բժիշկ Գրիգորիսը։

Կոնգրեսի եզրափակիչ նիստում սովետական պատվիրակության ղեկավար Բ. Դ. Պետրովը իր ելույթում ասաց, որ պատմությունը մի այրվող խարույկ է և դրան ուսումնասիրողները բաժանվում են երկու խմբի՝ գոյություն ունեն բժշկապատմաբաններ, որոնք գրում են այդ խարույկի մոխրի մասին և կան գիտնականներ, որոնք գրում են այրվող խարույկի կրակի մասին։ Մենք պատկանում ենք վերջին խմբին, որոնք, հետազոտելով բժշկագիտության պատմությունը, այն ծառայեցնում են մարդկության առողջությանը։

*Ստացվել է 1.XI.1960 թ.*